



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«04» 05 2019թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 24

Ձեռնարկողը՝

«Էկո Ագրո» ՍՊԸ

Առինջ գ. Մ. Մկրտչյան փող. 1, փ. 32

Գործունեությունը՝

Քարաշամբի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 6/80 հորատանցքից հանքային ջրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվեքվություն

Կտրայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դոնոյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 24

« 07 » 05 2019թ.

Կոտայքի մարզի Քարաշամբի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 6/80 հորատանցքից հանքային ջրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Էկո Ագրո» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/, կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	«Ա»
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզ, Թեղենիք համայնք

<<Էկո Ագրո>> ՍՊԸ-ն նախատեսում է իրականացնել Կոտայքի մարզի Քարաշամբի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 6/80 հորատանցքով հաշվարկված և հաստատված պաշարից հանքային ջրի արդյունահանում՝ արդյունաբերական (շալցման) նպատակով, 50 տարի ժամկետով:

Ընկերության կողմից պահանջվող հանքային ջրի ջրաքանակը կազմում է 0.77 /վրկ կամ 24282.7մ³/տարի:

Քարաշամբի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Նաիրիի տարածաշրջանում, Թեղենիք համայնքի վարչական տարածքում:

<ԷԿՈ ԱԳՐՈ> ՍՊ ընկերությունը հանքային ջրի շալցման գործընթացը սկզբնական շրջանում (2019-2023թ.թ.), մինչև հանքավայրի թիվ 6/80 հորատանցքի հարակից տարածքում հանքային ջրի շալցման գործարան կառուցելը, կիրականացնի Առինջ գյուղի վարչական տարածքում գտնվող իր սեփականությունը հանդիսացող պահածոների գործարանում: Հանքավայրի թիվ 6/80 հորատանցքից ավտոմոբիլ-ցիստեռնով (խմելու որակի) հանքային ջուրը կտեղափոխվի պահածոների գործարանի շալցման արտադրամաս, որտեղ և կկատարվի հանքային ջրի շալցումը: Հեռավորությունը հանքավայրից մինչև գործարանի տարածք կազմում է 28.0կմ:

Գործարանը հագեցած է ժամանակակից տեխնոլոգիաներով և սարքավորումներով:

Ընկերությունը հանքային ջրի շալցման արտադրության կազմակերպման, ինչպես նաև միջազգային շուկա դուրս գալու համար նախատեսում է հետագայում իր սեփականությունը հանդիսացող թիվ 6/80 հորատանցքի հարակից տարածքում կառուցել շալցման գործարան իր ենթակառուցվածքներով: Գործարանի շալցման արտադրամասի, ենթակառուցվածքների և օժանդակ շինությունների համար նախատեսված տարածքը գտնվում է Կոտայքի մարզի Թեղենիք համայնքի վարչական տարածքում:



Քարաշամբի հանքային ջրերը ածխաթթվային են (CO₂-99.4-99.7%), թույլ թթվային (pH-6.6-7.0): Ըստ քիմիական կազմի հիդրոկարբոնատ-քլորիդային, նատրիում-մագնեզիումային են 8.0-11.5գ/լ հանքայնացումով և 16.0-17.5°C ջերմաստիճանով:

Լուծված CO₂ գազի պարունակությունը կազմում է 0.9-1.0գ/լ, իսկ ազատ CO₂ գազինը՝ 1.85-2.21գ/լ:

Սպեցիֆիկ միկրոկոմպոնենտների չնչին քանակի պարունակությունը չի գերազանցում թույլատրելի սահմանները:

Հանքային ջրի մանրէաբանական կազմը բարվոք է:

Ջրի քիմիական անալիզները կատարվել են Երկրաբանական վարչության «Կենտրոնական», այժմ «Անալիտիկ» և «Ազգային ակադեմիայի երկրաբանական ինստիտուտի հիդրոքիմիայի լաբորատորիաներում, իսկ հսկիչ անալիզները՝ «Առողջապահության նախարարության «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ լաբորատորիայում:

Հանքավայրի ջրերը կարելի է հաջողությամբ օգտագործել որպես բուժիչ-խմելու ջուր, ինչպես շշալցման, այնպես էլ հանքաջրաբուժական նպատակով:

Թիվ 6/80 հորատանցքը գտնվում է Արզական և Քարաշամբ գյուղերի միջև, 7/80 հորատանցքից 1175.0մ դեպի հյուսիս-արևելք, Հրազդան գետի աջ ափին՝ 175մ հեռավորության վրա:

Թիվ 6/80 հորատանցքի բացարձակ բարձրությունը – 1447.0մ:

Հանքավայրի ջրերն իրենց քիմիական կազմով և առանձնահատկություններով մոտ են «Արզնի» հանքային ջրերի տիպին:

Կոտայքի մարզի Քարաշամբի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի հանքային ջրի և ազատ ածխաթթու գազի շահագործողական պաշարները 30.04.1982թ.-ի դրությամբ հաստատվել են ԽՍՀՄ Պաշարների Տարածքային Հանձնաժողովի (ՊՏՀ) կողմից (արձանագրություն թիվ 261, 29.06.1982թ.): Հանքավայրի շահագործողական պաշարները հաշվարկվել են երկու հորատանցքերով, այդ թվում՝

Հանքային ջրի պաշարներ՝

6/80 հորատանցքով - B կարգի՝ 0.77 Վ/վրկ կամ 66.5 մ³/օր,

7/80 հորատանցքով - B կարգի՝ 2.94 Վ/վրկ կամ 254.0 մ³/օր,

Ազատ ածխաթթու գազի պաշարները՝

6/80 հորատանցքով - B կարգի՝ 1.85 գ/լ կամ 1.23 մ³/մ³,

7/80 հորատանցքով - B կարգի՝ 2.21 գ/լ կամ 1.48 մ³/մ³:

Հանքային ջրերի պաշարները վերականգնման առանձնահատկություն ունեն և շահագործման ընթացքում պահանջում են զուգահեռաբար իրականացնել ջրերի որակի, քանակի, վիճակի և շահագործման ռեժիմի նկատմամբ ուսումնասիրություններ, որը գերծ կպահի ջրերը աղտոտումից, սպառումից և տեխնածին գործընթացների վնասակար ազդեցությունից:

Ելնելով վերոնշյալից՝ հանքավայրում, համաձայն «Կառավարության 22 նոյեմբերի 2012թ. 1480-Ն որոշման հավելվածի, սահմանված կարգով, կիրականացվեն մշտադիտարկումներ (մոնիթորինգ) ջրի և ազատ ածխաթթու գազի ծախսի, ջրի մակարդակի և ջերմաստիճանի չափումներ, ինչպես նաև կկատարվեն ջրի նմուշարկումներ՝ համապատասխան լաբորատոր հետազոտություններ իրականացնելու համար:

Հանքային ջրերի ջրհավաք հորատանցքերի արդյունավետ շահագործման համար նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- Ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի արդյունաբերական շահագործումը իրականացվելու է հատուկ ջրհավաք (կապտաժային) հորատանցքից կահավորված չժանգոտվող (խմելու որակի) խողովակաշարով: Շահագործման ժամանակ բացառվելու է



շահագործվող ջրհավաք հորատանցքից ՊՏՀ-ի կողմից հաստատված պաշարների չափից ավելի արդյունահանումը:

- Ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի հորատանցքի շահագործումը իրականացվելու է հիդրոերկրաբանական պայմաններին, հանքային ջրերի հաստատված պաշարների քանակին, նրանց քիմիական կազմին, ջերմաստիճանին և ռեժիմին խիստ համապատասխան:

- Իրականացվելու է սիստեմատիկ հիդրոերկրաբանական ռեժիմային ստացիոնար մշտադիտարկումներ (մոնիթորինգ) ջրհավաք հորատանցքի շահագործման ռեժիմի և տեխնիկական վիճակի նկատմամբ:

- Կառուցապատվելու է ջրհավաք հորատանցքը՝ առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտիով:

Ելնելով հանքավայրի հիդրոերկրաբանական պայմաններից և գործող մեթոդական ցուցումներից՝ ջրի և ազատ ածխաթթու գազի ծախսի, ջրի մակարդակի և ջերմաստիճանի չափումները կկատարվեն 10 օրը մեկ:

Ջրի նմուշները քիմիական լաբորատորիայում ենթարկվելու են կրճատ քիմիական անալիզի, որտեղ որոշվելու են – (Na+K), NH₄, Ca, Mg, Fe, Cl, SO₄, NO₂, NO₃, CO₃, HCO₃, SiO₂, H₂S, կոշտությունը, հանքայնացումը, չոր նստվածքը, թթվայնությունը, ջրի ֆիզիկական հատկությունները և այլն:

Այս աշխատանքների կատարման համար տարեկան նախատեսվում է ծախսել 1500.0 հազ. դրամ:

Ստացված արդյունքները հնարավորություն կընձեռնեն գնահատելու հանքավայրում տեղի ունեցող քանակական և որակական փոփոխությունները:

Հաստատված պաշարների և մոնիթորինգի արդյունքում ստացված տվյալների միջև նկատվի զգալի տարբերություն, ապա կվերագնահատվեն հանքային ջրի հանքավայրի պաշարները:

Նկատի ունենալով 6/80 հանքային ջրերի հանքավայրի հորատանցքերի երկրաբանական կտրվածքը, ջրատար արդյունաբերական միջակայքի խորը տեղադրված լինելը և ջրի ճնշումային բնույթը՝ պետք է փաստել, որ այն գտնվում է բարենպաստ սանիտարահիգիենիկ և հիդրոերկրաբանական պայմաններում, որտեղ հորատանցքի գլխամասի սահմանված կարգով կահավորելուց հետո բացառվում է ստորերկրյա ջրերի աղտոտումը:

Ջրհավաք հորատանցքերն իրենց գլխամասային սարքավորումներով ներառվելու առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտում: Պաշտպանված ստորերկրյա ջրերի օգտագործման դեպքում, ըստ գործող հրահանգի, գոտու սահմանը յուրաքանչյուր հորատանցքի համար սահմանվում է 15.0մx25.0մ, որի մեջ ընդգրկված կլինի նաև թիվ 6/80 հորատանցքի նախագծվող կրկնորդ հորատանցքը: Գոտու մակերեսը կկազմի 375.0 մ²:

Գոտին պարսպապատվելու է մետաղական ցանկապատով և ապահովվելու է պահպանությունով:

Մինչև գոտու ցանկապատի կառուցման համար նախատեսվող բետոնային և հողային աշխատանքների իրականացումը հողաբուսաշերտը կկտրվի, ապա կօգտագործվի հետագա ռեկուլտիվացման աշխատանքներում: Հողաբուսաշերտի հզորությունը միջինը կազմում է 0.2մ, իսկ ցանկապատման 80.0զծ.մ համար հողաբուսաշերտի մակերեսը կկազմի՝ 16.0մ²: Բետոնային աշխատանքների ծավալը կկազմի՝ 9,6խմ:

Սանիտարական պահպանության գոտու կառուցման համար նախատեսվում է ծախսել 1200.0 հազ. դրամ:

Հանքավայրի հորատանցքերի առաջին սանիտարական պահպանության գոտու սահմաններում կպահպանվի ռեժիմ, որը կապահովի բարձր սանիտարահիգիենիկ պայմաններ և կպաշտպանի հանքային ջրերի հանքավայրը աղտոտումից և սպառումից:



Տարածքը աղակալված և էոզագցված չէ, ուստի դրա վերաբերյալ միջոցառումներ նախատեսված չեն:

Ընկերությունն օգտվելու է գոյություն ունեցող ավտոճանապարհից, գոյություն ունեցող ենթակառուցվածքներից՝ գազատար, ջրատար, էլեկտրահաղորդման գծեր և կոյուղագծեր, այլ օժանդակ շինություններ չեն նախատեսվում:

Հանքային ջրից ազատ ածխաթթու գազի կորզում չի նախատեսվում, քանզի թիվ 6/64 հորատանցքում ազատ գազի պարունակությունը հանքային ջրում կազմում է ընդամենը 1.85 գրամ 1 լիտրում: Ազատ ածխաթթու գազը ընկերությունը կգնի Լիճքի ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրից, որտեղ տարբեր ընկերությունների կողմից իրականացվում է ազատ ածխաթթու գազի կորզում ու կատարվում է 40.0 լիտրանոց բալոնների լիցքավորում, որի յուրաքանչյուրի տարողությունը կազմում է 20.0կգ ածխաթթու գազ: Ավտոմեքենայով բալոնները կտեղափոխվեն Առինջ գյուղի վարչական տարածքում գտնվող պահածոների գործարան:

Քարաշամբի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 6/80 հորատանցքի հանքային ջրի արդյունավետ և պատշաճ շահագործման համար <ԷԿՈ ԱԳՐՈ> ՍՊԸ նախատեսում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- Իրականացնել 6/80 հորատանցքի փորի մաքրման աշխատանքներ, ինչպես նաև ամրակապել հորատանցքը մինչև 70.0մ չժանգոտվող (խմելու որակի) 108մ կամ 127մ տրամագծի խողովակաշարով:

- Համաձայն Քարաշամբի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի հաշվետվության հեղինակների և նախկին ԽՍՀՄ Պաշարների Տարածքային Հանձնաժողովի (ՊՏՀ) որոշման թիվ 6/80 հորատանցքի մոտակայքում (10.0-15.0մ հեռավորության վրա) նախատեսվում է հորատել 200.0մ-ոց նոր ջրհավաք հորատանցք կահավորված չժանգոտվող (խմելու որակի) խողովակաշարով, որպես 6/80 հորատանցքի կրկնորդ: Ջրհավաք հորատանցքը կօգտագործվի 6/80 հորատանցքի վրա վերանորոգման աշխատանքների իրականացման ժամանակ:

- Ջրհավաք հորատանցքերի բերանի շուրջ ֆունդամենտի հուսալի հիդրոիզոլյացիա, որը կբացառի մակերևութային աղտոտված ջրերի մուտքը դեպի հորատանցք:

- Շատրվանող ջրհավաք հորատանցքերի գլխամասերը սահմանված կարգով կահավորում համապատասխան սարքավորումներով՝ փականներ, չափիչ սարքեր, կապարակնքված ջրաչափեր, գազանջատիչ: Սույն աշխատանքները կիրականացվեն ՀՀ կառավարության 5 հոկտեմբերի 2017 թվականի N 1267-Ն որոշման պահանջներին համապատասխան:

- Ջրհավաք հորատանցքերի կառուցապատում սանիտարական պահպանության առաջին (խիստ ռեժիմի) գոտիով:

- հիդրոտերկրաբանական ռեժիմային ստացիոնար դիտարկումների իրականացում (մոնիթորինգ) շահագործողական հորատանցքերի շահագործման ռեժիմի և տեխնիկական վիճակի նկատմամբ

- Հանքավայրի հիդրոդինամիկ և հիդրոքիմիական պայմանները խախտելուց խուսափելու համար շատրվանող ջրհավաք հորատանցքերից ջրառի իրականացում՝ բնական ինքնահոսի պայմաններում, նախատեսելով հանքային ջրի թողք, բացառելով ջրահեռացվող ջրի օգտագործման հնարավորությունը:

- Հանքավայրի հանքային ջրի արդյունահանման ժամկետը լրանալուց հետո ջրհավաք հորատանցքերի բերանի փականների փակում և կապարակնքում հանքավայրի կոնսերվացում:

Ընկերությունը նախատեսում է պարբերաբար հանդիպումներ հանրության հետ, քննարկելու անհրաժեշտ օգնության ծրագրեր և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարելու համար:



ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Հանքավայրի շահագործման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են բնապահպանության նախարարության ստորաբաժանումները, առողջապահության նախարարությունը: Փորձաքննական գործընթացում նախագիծը լրամշակվել է, հաշվի են առնվել դիտողություններն ու առաջարկությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը:

Փորձաքննական պահանջներ

- Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների (ջրերի որակի, քանակի, վիճակի, օդ, հող և այլն) և շահագործման ռեժիմի մոնիթորինգ, կազմել հետևախազձային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հասարակայնությանը: Անհրաժեշտության դեպքում նախատեսել շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ:
- Շշալցման գործարանի կառուցման համապատասխան փաստաթղթերը՝ մինչև իրականացումը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել Բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Էկո Ագրո» ՍՊԸ կողմից ներկայացված Կոտայքի մարզի Քարաշամբի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 6/80 հորատանցքից հանքային ջրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ



Զ. Զուռնայան